

## Տ. ՇԱՀԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՃԵՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԻՆ

**(25 դեկտեմբերի 1990 թ.)**

**«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:**

«Ստեփանոս այր լի շնորհօք և զօրութեամբ»:

Այս բառերով կսկսի այսօրվան ճաշու ընթերցվածը՝ Գործք Առաքելոց գիրքեն, ուր կպատմվի Ստեփանոսի նահատակությունը. «Ստեփանոս մարդ մը լեցուն շնորհներով և զորությամբ»:

Ստեփանոսի նահատակության պատմությունը կտանի մեզ քրիստոնեական առաջին Եկեղեցվո առաջին մեծ տագնապին, առաջին ընդհարումին՝ քրիստոնյաներուն և Օրենքի հրեա վարդապետներուն միջև: Ստեփանոս ընտացած էր Աստուծո շնորհներն, այն օրեն, երբ Հոգին Սուրբ հրեղեն լեզվի նման իջավ առաքյալաներուն և այլափոխեց անոնց լեզուները, ըրավ զանոնք կրակի լեզուներ, որոնց խոսքերը պիտի վրդովեին սիրտերը և բանային հոգիները՝ Ավետարանի պատգամին և փրկագործության պատմության: Այդ օրեն ի վեր, առաքյալներուն և անոնց հետևորդներուն փոքրիկ խումբը մեկ նպատակ ուներ այլևս՝ տարածել Քրիստոսի իշխանությունը, պատմել աշխարհին և մանավանդ տաճարին մեջ հավաքված հրեաներուն թե՝ եկավ խոստացված փրկիչը, Դավիթի սերունդեն, թե ան ծնավ Դավիթի քաղաքին մեջ, ինչպես նախատեսված էր Հին Կտակարանի պատմությամբ և մարգարեություններով, պատմել անոնց թե Հիսուս, Իր հրաշագործություններով և քարոզությամբ, բերավ փրկությունը հրեաներուն, անոնց որոնք կսպասեին «փրկչին»՝ Աստուծմե խոստացված մեսիային, բերավ խոստումը թագավորության մը, որ ոչ թե զենքով, զրահով ու բիրտ ուժով պիտի հաստատվի փոքը այս երկրի վրա, այլ պիտի հաստատվի սրտերուն մեջ բոլոր անոնց, որոնք պիտի հավատան արարիչ Աստծուն և Անոր Որդվույն:

Այսօր ոգեկոչված Ս. Ստեփանոսի պատմությունը, երբ կսկսի «շնորհներ» և «զորություն» բառերով, կակնարկե ճիշտ այն շնորհներուն, որոնք

իջան առաքյալներուն և սարկավագներուն և անոնց անմիջական հետևորդներուն վրա, որոնք կհավաքվեին Երուսաղեմի Սիոն լեռան վրա կանգնած այն փոքր սենյակին մեջ, Հիսուսի համբարձումեն ետք: Այդ շնորհներուն առաջինն էր քարոզության շնորհը, շնորհներուն մեծագույնը և կարևորագույնը, ամենեն հիմնականը, որ տվավ անոնց զորությունը ըլլալու Ս. Ավետարանին պատգամաբերները, պատմելու համար աշխարհին Հիսուսի պատմությունը, ճանչցնելու զԱյն ամենուն, գիտցնելու՝ թե Ան եկավ տանելու համար մարդկությունը ուրիշ տեսակի կյանքի մը՝ Աստուծո թագավորության կյանքին, ուր կիշխե Աստուծո ներկայությունը: Անոնք կոչվեցան «սարկավագներ» ու տրվեցավ անոնց զորությունը ծառայելու սեղանին ու Հիսուսի անունով հավաքված հավատացյալներուն, մատակարարելու հացն ու գինին, մատակարարելու նաև Աստուծո խոսքը:

Այդ շնորհն ու զորությունը եղավ Ստեփանոս սարկավագի նահատակության պատճառը: «Գործք Առաքելոց»-ը կըսե թե հրեաները վրդովեցան անոր դեմ, որովհետև ամեն օր ան կվիճեր տաճարին մեջ հավաքված մարդոց հետ և կուզեր հավատացնել, կուզեր համոզել, կուզեր մտքերու մեջ հաստակ և պայծառ դնել այն ճշմարտությունը, թե Հիսուս է Քրիստոսը, թե Ան է կյանքը, Ան է լույսը, Ան է ճշմարտությունը, Ան է ճանապարհը, բայց մանավանդ Ան է լրումն Օրինաց և Մարգարեից:

Այս նույն պատմության մեջ, ուր կըսվի, թե վրդովված հրեաները քաղաքի պարիսպներուն մոտ դուրս տարին Ստեփանոսը և քարկոծեցին զայն, նույն պատմության մեջ կըսվի, թե Ստեփանոսի դեմքը ճաճանչավոր լույսով էր լուսավորված: Եվ միևնույն պատմությունը կակնարկե ուրիշ դեմքի մը ու կըսե թե Սավուղ նստած էր այնտեղ իբրև դատավոր, գոհ՝ թե կը լռեցներ Հիսուսի խոսքը խոսող լեզուն: Եվ այդ պատմության մեջ այս երկու հակադիր դեմքերու ներկայությունը կարծեք կուզե բացատրել մեզի իմաստը նահատակության՝ նահատակություն, որուն առաջինը եղավ Ստեփանոս սարկավագը:

Նահատակությունը, սիրելի սարկավագներ, իրականին մեջ, շարունակությունն է քարոզության: Նահատակությունը իրականին մեջ այն ուժեղ պատգամն է, որ այլևս մարդը իր լեզվով չի կրնար տալ, սակայն իր օրինակովը կուտա: Որովհետև հակառակ այդ լեզուն լռեցնելու անոնց փորձին, Ստեփանոսի վկայության փաստը ավելի խոշոր քարոզ մը եղավ և ամենեն ավելի, և ամենեն սաստիկ կերպով կարողացավ խոսել Սավուղի սրտին, այն չափով, որ ան դարձավ ավելի մեծ քարոզիչ մը Հիսուսի ճշմարտության քան նահատակվող Ստեփանոս սարկավագը:

Այսօր, բարեշնորհ սարկավագներ, դուք ձեր մեկ ձեռքին առիք բուրվառ, ձեր մյուս ձեռքին՝ տապանակը և ձեր գլուխները զարդարվեցան գեղեցիկ թագերով: Դուք այս Քրիստոսաշնորհ տաճարին և Իշման սեղանին շնորհալի սպասավորներն եք: Այսօր Եկեղեցին զարդարեց ձեզ՝ բան մը ըսելու համար ձեզի: Ըսելու համար, թե քրիստոնեական հասկացողությամբ, կյանքի թագն ու պսակը նահատակությունն է, այսինքն՝ զոհողությունը, ամբողջական զոհողությունը, ծայրահեղ պարագաներուն մինչև իսկ կյանքի զոհողությունը, մինչև իսկ արյան զոհողությունը: Երկու հազար տարիներ առաջ քրիստոնեության սերմերը աճեցան, բազմացան, որովհետև անոնք ոռոգվեցան նահատակներուն արյունով: Այդ արյան կաթիլները, որ ինկան

մարդոց հողին վրա, բայց նախ մարդոց սրտերուն մեջ, անոնք աճեցուցին իրական սերը Քրիստոսի:

Երկրորդ, ձեր ձեռքի մեջ դուք ունիք խնկամանը. խնկամանը և խունկը խորհրդանիշն է աղոթքին և պաշտամունքին: Իրապես ալ Աստուծո սպասավորներուն մեծ կոչումն է ժողովուրդը հրավիրել աղոթքի, ժողովուրդի սրտեն անուշահոտ խունկի նման բարձրացնել աղոթքը մինչև երկնավոր Հոր ականջները՝ մատուցանելու համար ամենօրյա փառք և պատիվ, սրբացնելու համար Անոր անունը վեցթևյան սերովբեներու, հրեշտակներու աղոթքին նըման, փառաբանելու համար Անոր անունը, բայց միևնույն ատեն խնդրելու համար Անկե Իր շնորհները: Եվ ամենամեծ շնորհները, որ կրնա մարդ ապասել իր աղոթքի մեջեն, այն է, որ ունենա իր տկարության գիտակցությունը: Անցյալ կիրակիի Ավետարանը խոսեցավ աղոթքի մասին շատ պարզ օրինակովը մաքսավորին և փարիսեցիին, որոնք տաճար եկան աղոթելու: Հիսուս ըսավ թե Աստված լսեց մաքսավորին աղոթքը: Ի՞նչ էր այդ աղոթքը, եթե ոչ արտահայտությունը այն գիտակցության, թե ինք գիտե, որ Աստուծո դիմաց ինք տկար, մեղավոր արարած մըն է: Այդ գիտակցությունն է, որ իրապես կմեծցնե մարդը, այդ տկար, խեղճ մարդը կզորացնե, ինչպես զորացավ Ստեփանոս մահվան դիմաց: Աղոթքն է, որ մեր մեջ կսպանե հին մարդը ու ծնունդ կուտա նոր մարդուն: Ծնունդ կուտա այն մարդուն, որուն աչքը բևեռված է առ Աստված: Ծնունդ կուտա այն հոգիին, որ իրապես խունկի նման միայն անուշաբույր խոսքերով և անուշաբույր գործերով կխնկվի և կրակի վրա կայրվի Աստուծո փառքին համար:

Երրորդ խորհրդանիշը, որ այսօր ձեր ձեռքին բռնած եք, տապանակն է, տապանակը՝ մեր Եկեղեցին: Ինչպես Հին Ուխտին տապանակը առաջնորդեց հրեա ժողովուրդը անապատեն մինչև Երուսաղեմ, մինչև խոստացված երկիրը, մինչև ավետյաց հողը, այնպես ալ մեր Եկեղեցին խորհրդանիշն է այն նույն տապանակին: Սակայն ոչ թե Հին Ուխտի, այլ Նոր Ուխտի տապանակին, այն ուխտին, որ մեր ժողովուրդը կնքած է իր Աստուծույն հետ՝ մկրտության մեռոնով, այն ուխտին, որ մեր ժողովուրդը դարերով կնքած է Աստուծո հետ, խոստանալով պահել Անոր պատվիրանները, լսել Անոր խոսքերը, առաջնորդվիլ Անոր սկզբունքներով ու քարոզությամբ և իր հոգիին մեջ մաքուր և ամուր պահել իր հայրերու հավատքը:

Բարեշնորհ սարկավագներ Ս. Եկեղեցվո, դուք այդ ուխտապահ զինվորները եղեք մեր Եկեղեցվո: Թող տապանակ ուխտին ձեր ձեռքին մեջ ըլլա խորհրդանշանը այն Եկեղեցիին, որուն պիտի նվիրեք ձեր կյանքը և հոգին: Անկե ստացեք ձեր կյանքի լույսը, այն լույսը, որ այստեղ իջավ Լուսավորչի օրոք և անշեջ մնաց մինչև մեր օրերը: Թող ձեր խոսքին, ձեր քարոզության, ձեր կյանքին մեջ անիկա խոսի ձեր բերանով և դուք ըսեք միշտ մեր ժողովուրդին, թե մենք՝ հայ ժողովուրդ, ուխտ ունինք Աստուծո հետ, ուխտ մը՝ հավատարիմ մնալու մեր հավատքին, հավատարիմ մնալու մեր հայրերու կյանքին, հավատարիմ մնալու մեր պատմության, հավատարիմ մնալու մեր ազգային արժեքներուն, հավատարիմ մնալու մեր մշակույթին, մեր լեզվին, մեր ոգիին, հավատարիմ մնալու մանավանդ և ամեն բանե առաջ և ավելին՝ մեր Մայր Հայրենիքին: Այս է այն պատգամը, որ ավետարանված է լուսո այս խորանեն դարերով, և մենք կաղոթենք այսօր, ի սրտե կաղոթենք, ամբողջ հոգիով կաթողենք առ Աստված, որ ձեզի պես բազմաթիվ սարկա-

վագներ գան այստեղ, որ ձեր թիվերը բազմապատկվին տասնյակներով և հարյուրավորներով, և դուք նվիրեք ձեր կյանքը Աստուծո, մեր Եկեղեցիին, մեր հայրենիքին, մեր ժողովուրդին, որ մնան անոնք Քրիստոսապաշտ խաչին զորությամբը հորդացած, նվիրումի և զոհողության հոգիով լեցված, Աստուծո շնորհներով լեցուն և մանավանդ Անոր զորությամբ զորացած հայ հավատացյալներ, ի փառս Աստուծո և ի պայծառություն մեր Եկեղեցվո, հավիտյանս ամեն: